№ 264 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 1902 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 № 264

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խրատանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Իշխաններ Դաւիթ եւ Իլիա Զախարովիչ Մելիքովները եւ իշխանուհի Մարթա Զախարեվնա Ճավճավաձէ ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին իրանց մօր՝

ԻԹԽԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱ ԶԱԽԱՐԵՎՆԱ ՄԵԼԻՔՈՎԱՅԻ

մահը։ Հոգեհանգիստներ տեղի են ունենում ամեն օր, երեկոյեան 8 ժամին (Կոջորի փողոց, տուն № 7)։ Թաղմարկաւորութիւնը՝ կիրակի, դեկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամի 10-ին դէպի Վանքի մայր-եկեղեցին։ 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցիշեցնում ենք. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր գրական բարքերից. Թիւրիմացութեան արդիւնք. Նամակ Կարսից. Նամակ Մոսկվայից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԵԱՑՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Օգնութիւնից յետոյ։

ՑԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ

Մեր ընթերցողները գիտեն, որ տարիների ընթացքում մենք չենք դադարում օգտվել ամեն մի դէպքից առաջ մղելու և լուսաբանելու մի խնդիր, որ վերաբերում է մեր երկրի կուլտուրական զարգացմանը։ Դա մեր երկրի զանազան անկիւններում և գաւառական շրջաններում կուլտուրական կորիզներ կազմելու խնդիրն է։

Մենք կրկնել ենք, կրկնում ենք և պէտք է շատ անգամ յիշեցնենք, որ երկրի բոլոր կենդանի ոյժերը համերաշխ գործակցութեամբ, առանց ծագման եւ դաւանութեան խտրութեան, պարտաւոր են աշխատել բեղմնաւորելու մեր բազմացող և բազմատեսակ երկրի բոլոր խորշերի կեանքը, որպէս զի հիմք դրվի առաջադիմական-կուլտուրական շարժման, սթափիվ դարերով թմրած աշխարհաշէն ոգին և կովկասը ապարեզ հանէ թէ իր բնութեան յատկութիւնները և թէ իր ազգաբնակութեան ընդունակութիւնները։

Մենք առանձին կերպով շեշտել ենք գաւառական կեանքի առաջադիմութեան խնդրի վրա այն պատճառով, որ կենտրոնական կէտերի մասին հոգատարութիւն կայ փոքր ի շատէ և որ գաւառական կեանքի զարգացման խնդրին մենք տուել էական նշանակութիւն։ Մենք ցանկացել ենք, որ գաւառական շրջաններում, ուր ապրում է մեր ժողովրդի մեծամասնութիւնը, ուր զանազան ցեղեր և դաւանութիւնները մշտական ընդհարումների մէջ են գտնվում, որ այդտեղ ցրված լինեն առաջ գնալու սաղմեր և սերմեր, որպէս զի մեր երկրի բարեփոխութեան գործը խոր արմատներ բռնէր կեանքի մէջ և իսկապէս սկիզբ դնէր կուլտուրական առաջադիմութեանը։

Միայն այն ժամանակ, երբ երկրի բոլոր մասերը, նրա բոլոր բնակիչները կը զգան կուլտուրական առաջադիմութեան պահանջը և կը սկսեն դպրոցների, արհեստանոցների, հասարակական հիմնարկութիւնների և զանազան ձեռնարկութիւնների միջոցով իրագործել այն ծրագիրները, որ մշակել են լայն հայեացք ունեցող թէ պետական և թէ մասնաւոր անձինք մեր երկրի վերաբերութեամբ, այն ժամանակ ստեղծված կը լինի կուլտուրական հանգոյցների մի ցանց, որ կեանք կը տայ երկրին և նրա մէջ ապրող ժողովրդին։

Պետութիւնը պահանջում է գործ մեզանից, հասարակական միտքը առաջ է մղել մի շարք խնդիրներ, երկրի ազգաբնակութիւնը ունի անթիւ կարիքներ, որոնց համար նա որոնում է հոգատարներ։ Իսկ կեանքի մէջ գործողներ շատ քիչ են երևում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Նոր լոյս տեսաւ «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» գրքի երկրորդ հատորը, հեղինակութիւն Էջմիածնի միաբան Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեանի (Ճուղուրեանց)։ Ինչպէս վերնագիրն էլ ցոյց է տալիս, դա մի հետազօտութիւն է Խորենացու մասին։ Եւ իրաւ, գրքի մէջ 158 երես նուիրված է Խորենացուն. մեր խօսքը, սակայն, այդ երեսների մասին չէ։ Գրքի մէջ մենք գտնում ենք եւ մի առաջաբան ու վերջաբան։ Ուշադրութիւն կը դարձնենք առայժմ առաջինի վրա։

Այդտեղ Բարդուղիմէոս եպիսկոպոսը մի քանի բացատրութիւններ է տուել իր գրքի առաջին հատորի առիթով եղած քննադատութիւնների մասին։ Բացատրութիւններ են դրանք, որոնք, մեր կարծիքով, շատ բնորոշ են մեր բարքերի առհասարակ եւ գրական բարքերի տեսակէտից մասնաւորապէս։

Առաջաբանից իմանում ենք, որ գրքի առաջին հատորի մասին խօսել է եւ «Լուսաւոր» հանդէսը։ Բարդուղիմէոս եպիսկոպոսն ասում է, թէ նա իր գրքից չէր ուղարկել «Լուսաւորի» քննադատ Տէր-Միքէլեանին։ Բայց ինչպէս էր գիրքը ընկել նրա ձեռքը։

Ապացուցված է—ասում է նա—որ ասակաւին իմ գրքից եւ ոչ մի օրինակ իմ ձեռքը չը հասած, չը նայելով որ ցրվելու թոյլատրութիւն վաղուց ստացված էր, տպարանի վարչութիւնն 82 օրինակ իմ գրքից գաղել եւ իւրացրել էր, ի հարկէ Ա. ա. Միքէլեանին եւս մի օրինակ առանձին զակազով ուղարկել՝ որպէս զի կիրքս քննադատէ եւ ինձ ի դէպ մի պինդ հայհոյէ։ Նա ճանաչված էր իբրեւ այդպիսի յանձնարարութիւններ առանձնող։

Խօսքը Էջմիածնի տպարանի վարչութեան մասին է։ Հիանալի կարգեր են տիրում այնտեղ, չէ։

Բայց առաջ գնանք։ Էջմիածնի շրջաններում եւ այդ շրջաններին հլու հաւատարիմ հայաստանեաց առաքելական եկեղեցու հարազատ զաւակների մէջ, ինչպէս յայտնի է, ասասիկ զարգացած է ինտրիգան. առանց ինտրիգաների, անձնական հաշիւների այնտեղ բան չէ կատարվում, նոյն իսկ քննադատութիւն մի հին գրքի, հին հարցի մասին։ Եւ ահա «Լուսայի» քննադատը, թողնելով Խորենացուն մի կողմ, ասել է, թէ Բարդուղիմէոս եպիսկոպոսը «շատ հասէր եւ անխիղճ» մարդ է։ Եւ Բարդուղիմէոս եպիսկոպոսը վրդովվել է։ Ի՞նչպէս, իմ գրքի միջից, որ խօսում է Խորենացու մասին, դուք դուրս էք բերում, թէ ես շահասէր եւ անխիղճ մարդ եմ։ Շատ լաւ, ես էլ ցոյց կը տամ, թէ դուք ինչ տեսակ մարդիկ էք։ Եւ Բարդուղիմէոս եպիսկոպոսը ասում է. «Այդպիսի անպատկառ զրպարտութեան համար, բայց որչափ եւ ծանր, ինչու դիմել դատի, քանի որ գրքի մէջ մատած ամբաստանութեան՝ գրքի մէջ եւս կարելի էր պատասխանել։»

Շատ խելօք վարմունք։ Եւ ահա, հաւատարիմ մնալով այդ սկզբունքին, Բարդուղիմէոս եպիսկոպոսը պատասխանում է իր դէմ եղած ամբաստանութեան։ Մենք միայն բառ առ բառ կարտատպենք այստեղ այդ պատասխանը։ Ահա նա.

«Թողնենք մեռած Ա. ա. Միքէլեանին հանգիստ. բայց չէ որ «Լուսայի» խմբագիրը նոյնպէս պատասխանատու էր եւ է, որ խուսափելով ուղիղ պատասխանից եւ ընթերցողին մոլորեցնելով՝ թոյլ էր տալիս իմ դէմ այդ անտեղի հայհոյութիւնը եւ երկրորդ անգամ։ Դա արժ. Գիւտ ա. ք. Աղանեանցն է։—Մենք տէր հօր խղճով եւ անշահասէր լինելու մասին կարող ենք միայն յիշեցնել (վկայելու պէտք չը կայ, բանի որ ամենքը գիտեն) թէ՝ ինչպէս ուրիշ քահանաների ծուխերին եւ հակառակ իսկ ծուխերին՝ տիրանալու համար մեծամեծ գժտութիւնների պատճառներ է տուել (օրին. Մակար Կաթուղիկոսի եւ Տփխիսի Առաջնորդ Սեդրակեանի մէջ)։— Թէ՝ ինչպէս ա. Էջմիածնի մատենադարանից իւրացրել է «Դիւան Հայոց Պատմութեան» պատրաստութիւնը։—Թէ՝ ինչպէս այժմ էլ արտագրել տարել է, չը լցողելով բնագիրը իւրացնել, Գիւմուշխանցի Մանուէլ վարդապետի ինքնակենսագրական պատմական ձեռագրի օրինակը։—Թէ՝ ինչպէս Մակար Կաթուղիկոսին կողոպտող հաճի Յակովբի գրպանում բռնված տասն հա-

---

—Իսկ արդեօք կտուրները նոյնպէս կը վերցնէք նոր տեսակինը։

Այդ հարցի վերաբերութեամբ կարծիքները բաժանվեցին։ Բոլորը համաձայն էին, որ նոր ձեւի կտուրները աւելի թեթեւ են եւ աւելի ապահով երկրաշարժի ժամանակ. բայց գիւղացիները նախատեսում էին իրանց համար դժուարութիւններ այն բանում, որ կարող են քերթերի պատրաստ պաշարներ չը լինել գիւղերում։ Նրանք պէտք է նախօրօք պատուիրեն այդ քերթերը Բօրժոմի կալուածքում, որ հեռու է գիւղերից։

—Երբ որ պահանջը մեծանայ եւ մշտական գնող լինի, առարկում էին միւսները, այն ժամանակ կերեւան եւ քերթ պատրաստողներ ու ծախողներ։

Կտուրների մեծագոյն մասը ծածկված է քերթով, իսկ միւսը՝ տախտակներով։ Գիւղացիները դեռ որոշ գաղափար չունեն, թէ նրանցից որն է աւելի դիմադրելի, բայց տիրող կարծիքն այն է, որ քերթը աւելի յարմար պէտք է լինի։

Այն տներում, որ գիւղացիները իրանք են նորոգել իրանց միջոցներով, նրանք թողել են կտուրների հին ձեւը, թանգ համարելով նոր տեսակի կտուրները եւ սպասելով մինչեւ պարզվի, թէ որքան յարմար են նոր տեսակի կտուրները։

Իմաիլայի աչքի ընկնող նորութիւններից մէկն այն է, որ սկսել են բացվել ուղղաձիգ եւ բաւական լայն փողոցներ։ Առաջ էլ կային այդ փողոցները, բայց նրանք նեղ էին եւ չափազանց ծուռ ու մուռ։

—Ինքներս էլ ուզում ենք, որ փողոցները լայնարձակ լինեն, ասում էին գիւղացիները, բայց չէ աջողվում։ Փողոցը լայնացնելու եւ ուղղելու համար պէտք է սրա ու նրա տան մասերը գրաւենք կամ կալուածատիրոջ հողի մէջ մտնենք։ Իսկ այդ առաջացնում է անբարեակամութիւններ։ Բայց ժամանակով փողոցները աւելի ու աւելի կը դրսավեն, որովհետեւ նրանց անհրաժեշտութիւնը աւելի զգալի է դարձել այժմ, երբ շինված են եւ շինվում են նոր տներ, երբ պատերը կառուցվում են հողից վերեւ։

Արդարեւ նոր տները իրանց վերերկրեայ ուղղաձիգ պատերով աւելի զգալի են դարձրել հին նեղ եւ ծուռ փողոցների անյարմարութիւնները։

—Ուղիղ դծերն ունեն իրանց լոգիկան, նկատեց յանձնաժողովի անդամներից մէկը, դա գիւղական նոր շինարարութեան սկզբունքներից մէկն է լինելու։

Վառարանների մասին Իմաիլայում մենք լսեցինք նոյն կարծիքները, ինչ որ Բեժանօյում։ Նրանք լաւ տաքացնում են, բայց սթար շատ են պահանջում։ Վառարանների առաջ շինած թոնիրները չեն կարողանում ծառայել, իբրեւ գիւղական թոնիր, եւ գիւղացիները շարունակում են հաց թխել իրանց կաւեայ թոնիրներում։ Մի քանի նոր տներում գիւղացիները փորել են սենեակի յատակը եւ այնտեղ դնեղել ու ամրացրել իրանց շինած թոնիրները։ Այդպիսի թոնիրներ շինված են ուժգ տան մէջ։ Նրանք շինված կը լինէին աւելի մեծ քանակութեամբ, բայց երկիւղ էին կրել, որ մի գուցէ այդ բանի համար նրանք պատասխանատուութեան տակ ընկնեն։

Տեղական թոնիրը շինում են կանայք գիւղերի մօտ գտնվող կաւերից։ Թոնիրը ունի $1^1/_2$ արշին բարձրութիւն։ Նրա կողքերը ունեն $1^1/_2$—2 վերշոկ հաստութիւն։ Թոնիրը շինվում է առանձին, եւ երբ նա բոլորովին պատրաստ է, այն ժամանակ նրա համար տեղ են փորում յատակում եւ այնտեղ ամրացնում։

Մի երկու տներում յայտնեցին մեզ, որ նրանք դիտաւորութիւն ունեն փուռի հաց թխելու եւ թողնելու առ միշտ թոնիրները, որոնք թէ սենեակն են սեւացնում, թէ մարդկանց աչքերն են ցաւացնում եւ թէ վտանգաւոր են լինում երեխաների համար, որոնք անզգուշութիւնից երբեմնապէս մէջն են գլորվում։

Վառարանների վերաբերմամբ մի ընդհանուր կարծիք կայ, որ նրանք պէտք է շինվեին ոչ թէ սենեակի խուլ անկիւնում, այլ դրան մօտ, եւ որ հնոցի բերանը պէտք է նայէր լուսամուտներին, որպէս զի ցերեկվայ լոյսով կարելի լինէր տեսնել վառարանի մէջը։ Եթէ վառարանը լինէր դրան մօտ, այն ժամանակ նրա այժմեան տեղում կը շինվէին թախտեր մարդկանց նստելու եւ քնելու համար, իսկ այժմ թախտերը պէտք է շինվեն լուսամուտների մօտ, որ անյարմար է։

Սենեակները սուաղված չեն։ Գիւղացիներից մի քանիսը, Իմաիլայում հինգ մարդ, սուաղել են իրանց սենեակները դարմանի եւ ցեխի շաղախով եւ տուել նրանց բարեւաս կերպարանք։ Եղել են փորձողներ սուաղը ապիտակացնելու եւ պատերի տեսքը աւելի բարելաւելու։

Նոր շինած երկու սենեակները զանազան ձեւերով կապված են գոմանոցի հետ։ Դեռ չէ մշակվել միատեսակ մի ձեւ։ Նա կը մշակվի ժամանակով։

Իմաիլայում մենք նախաճաշեցինք։ Այդ ժամանակ եկան գիւղական ներկայացուցիչները

զար բուբլուց չորս հազարը ա. Գիւտին՝ պիտի հասնէր, բան ցուցման հաճի Ցակովբի։— Թէ՝ ինչպէս հազարներ նստեցրեց ս. Էջմիածնի գանձարանի վրա ձուլիչ եւ արագաթիվ մեքենաները, որոց առաջինը իբրեւ անպէտք ղ ռ ա դ ա երկաթ՝ բերած օրից թափված է ապարանի մի անկիւնում եւ այլն, եւ այլն։ Իր բախտից՝ չեմ կարող հեռու գնալ։ Այս յիշածներս, ինչպէս տեսնում էք, ընթերցողը, ոչ թէ մասնաւոր կամ նրա անհատական, այլ հասարակական, մանաւանդ թէ ազգի Մայր Աթոռին վերաբերեալ բաներում խղճով եւ անշահասէր լինելու իրական ապացոյցներ են, մինչ նա իմ շահասիրութեան եւ անխղճութեան իբրեւ վկայութիւն՝ երկու անգամ մատնացոյց արեց գրքիս 71-րդ անմեղ երեսը...

Միբրեւ արժ. Գիւտ ա. քահանայի յանցանքի մեղմացուցիչ հանգամանք պէտք է չը ծածկել՝ որ խեղճը աչքերը բացած օրից ճանաչել է Ցմի. Երբեմն Առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին եւ նրանից անբաժան հաճի Ցակովբին եւ առ հասարակ այդ պրօբի խրդճով ու անշահասէր մարդկանց. ուրիշ տեսակի մարդ ճանաչելու ճաշակ չունի...

«Քաջութիւն ունեցէք խոստովանելու՝ որ Բարդուղիմէոս վարդապետ — եպիսկոպոս Գէորգեանը այնքան շահասէր եւ անխիղճ է՝ որքան դուք Գիւտ ա. ք. Աղանեանց, եւ ձեզ արժանի Ար. ա. Միքէլեանները՝ մաքուր մարդիկ»...։

Այստեղ վերջանում է Բարդուղիմէոս եպիսկոպոսի պատասխանը։ O tempora, o mores!

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔ

Ինչպէս նախկին կոտորածների ժամանակ, նոյնպէս եւ այժմ, մակեդոնական կոտորածների ժամանակ, ռուսաց մամուլի մի քանի օրգաններ յանկարծ սոգորվել են Թիւրքասիրութեամբ եւ աշխատում են զանազան սոփեստութիւններով, շատ անգամ մարդասիրութեան տակ քողարկված մաքերով այն կարծիքը տարածել, թէ աւելորդ է եւրոպական միջամտութիւնը՝ գազանութիւնները կանգնեցնելու համար։ Այդ օրգաններից ոմանք աշխատում են նոյն իսկ մեղմացնել Թիւրքական գազանութիւնները, ասելով որ լրագրական տեղեկութիւնները չափազանցված են։ Խօսելով «Свѣтъ» լրագրի Թիւրքասիրութեան մասին, որ թոյլ է տուել իրան կասկածել «С.-П. Вѣдомости» լրագրի հաղորդած տեղեկութիւնների ճշդութիւնը, վերջինս ասում է. «Ինչով Թիւրքիան հրապուրել է «Свѣтъ»-ի խմբագիր Կ«ամարովին. գուցէ նա փափագ ունի զարդարել իր համալսարանը Մէջիդիէյի շքանշանով»։ «Свѣтъ» լրագրի օրինակին հետեւում է եւ Բագուի «Каспій» լրագիրը, որ ծաղրում է «С.-П. Вѣдомости» եւ ռուսաց միւս լրագիրների կոչը ռուսաց հասարակութեան՝ հանել Թշուառ մակեդոնացիներին օգնութեան։ Լրագիրը մեծ երկիւղ է կրում, որ չը լինի ռուսները, գնալով մակեդոնացիներին օգնութեան, կոթծանեն Թիւրքիան եւ կոտորեն Թիւրքերին։

«Դիցուք նոյն իսկ, որ Թիւրքերը կոտորում են մակեդոնացիներին—ասում է Թափչիբաշեվի օրգանը,—բայց եթէ Ռուսաստանը պատերազմ յայտնէ Թիւրքիային, այն ժամանակ ինչ կը ասացվի։ Այն ժամանակ այն կասացվի, որ ռուսները իրանց հերթին կը կոտորեն Թիւրքերին, իսկ սրանք ռուսներին։ Միթէ այդ լաւ կը լինի. միթէ չէ կարելի կանգնեցնել կոտորածը ուրիշ ճանապարհով»։

Շատ ցանկալի էր, որ լրագիրը ասեր, թէ կայ արդեօք մի որ եւ է միջոց բարբարոսութիւնները զսպելու. չէ որ Թիւրքիան, ինչպէս ցոյց է տալիս նրա ամբողջ պատմութիւնը, միշտ խուլ է գանվել բարի խորհուրդների, յորդորների առաջ եւ զիջել է միայն ոյժի, կոպիտ ոյժի առաջ։ Ղերիմն, միթէ պէտք է թոյլ տալ, որ նա շարունակ առիթներ տայ ձայն բարձրացնելու նրա հպատակների օգտին, որովհետեւ նրանք այլ եւս անկարող են տանել իրանց կրած զրկանքները։

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Նոյեմբերի 23-ին

Նոյեմբերի վերջին գանվում էի Զոլախլի գիւղում, որ Բասէնի հարաւային վերջին հայ գիւղն է եւ գանվում է Քեօսադաղի փէչերին շատ մօտ, ռուսաց սահմանի վրա։ Երեկոյեան ամբողջ խօսակցութեան նիւթն էին մօտակայքում նոր գանված ոսկու հանքերը, որոնց մասին բաւական ոգեւորված խօսում էին գիւղացիները։ Առաւօտեան որոշեցի գնալ այդտեղ եւ անձամբ տեսնել, մանաւանդ որ ճանապարհս էլ դէպի Կաղզուան՝ նրա մօտովն էր անցնելու։

Զոլախլի եւ Ղազուղ-ղայա քրդաբնակ գիւղերի մէջտեղը, փոքրիկ ջրի ափին, սկսել էին նախնական աշխատանքները հանքերի շահագործող պ.պ. Դրախմալով եւ Եզեկով երկրաչափները իրանց ընկերների հետ միասին։ Փորած էր մի մարդաչափ փոս եւ չորս կողմից շրջապատած տախտակներով, որպէս զի փոսի պատերը փուլ չը գան։ Մի քանի մշակներ ջրհան մեքենայով դուրս էին քաշում փոսի ջուրը եւ այդ գործողութիւնը պէտք է շարունակէին, մինչեւ ջուրը բոլորովին վերջանար, որը հետզհետէ աւելանում էր պատերից եկող բարակ հոսանքներից։ Փոսի կողքին շինած են երկու փայտեայ խողովակներ, երկրորդը առաջինից մի քիչ ցածր եւ կողոր ու բաւականաչափ խոշոր անցքերով. իւկ այդ անցքերի տակ ամրացրած է քաթանի կտոր։ Փորած փոսի մէջ մնացած մանր աւազները կաթսաներով հանում եւ լցնում են առաջին փայտեայ խողովակի մէջ եւ խոշորները երեսից տանելով՝ տակի մանր աւազը ոսկու հետ միասին մաղվում է քաթանի վրա։ Բանւորների ասելով՝ երբեմն լինում են հունի կորիզի չափ զուտ ոսկու կտորներ։

Ուզեցի հետաքրքրվել եւ մի քանի տեղեկութիւններ ստանալ այնտեղ գտնվող եւ աշխատանքներ զեկավարող երկրաչափից, որի ազնուանունը դժբաղդաբար մոռացել եմ, բայց պարտքս այնքան էլ հաճութեամբ չը վերաբերվեց իմ մտադրութեանը, առարկելով որ դեռ եւս ոչինչ յայտնի չէ եւ չարժէ ահագին աղմուկ բարձրացնել ու ուրիշներին էլ ձգել զուր ծախսերի մէջ, ինչպէս մեզ հետ է պատահել։ Բայց չը գիտեմ ինչու՞ ինձ անկեղծ չը թւացին նրա խօսքերը եւ ես այդ վերագրեցի ոչ թէ նրա անկեղծութեանը, այլ լոկ նրան, որ չէին ուզում դեռ եւս լուրը տարածվի, գուցէ մասամբ նրա համար, որ գիւղացիներից հողերի պայման կապելու մէջ դժուարութիւնների չը պատահեն եւ կամ ուրիշների ուշադրութիւնը շատ չը գրաւվի այդ ձեռնարկութեամբ, եւ այլն եւ այլն...

Մի քանի տեղերում արդէն փորձեր արել էին եւ փոսերը կրկին լցրել եւ փորձելու էին ուրիշ տեղեր էլ։ Սկսած այդ Ղազուղ-ղայա կոչված տեղից մինչեւ Զարապ-Խանա գրդի գիւղը, մօտ 20 վերստ տարածութեան վրա, նշաններ էին դրել եւ փոխ առ փոխ փորձեր են անելու ջրի ուղղութեամբ ամբողջ տարածութեան վրա. շահագործելու համար արդէն գիւղացիների հետ զանազան պայմաններ են կապել վերոյիշեալ պարոնները։

Պէտք է ասած, որ ժողովրդի մէջ աւանդութիւն կայ, որ այդ տեղերում պատմական ժամանակներում եղել են ոսկու հանքեր եւ նոյն իսկ մշակվել ու շահագործվել են. հետքերը մինչեւ այժմս էլ զանազան տեղերում նկատվում են. թէ այդ ջուրը եւ թէ տեղերը ստացել են Զարապ-խանա (հանքատեղ) անունը։ Նոյն անունը կրող քրդի գիւղի դէմը, ջրի հանդիպակաց կողմում, լերան լանջի վրա, գանվում են մի մեծ գիւղի կամ քաղաքի աւերակներ, եկեղեցիների եւ այլ շինութիւնների մնացորդներով. ենթադրվում է, որ դա «Սեօգիւղին» է, եւ այդտեղի հարստութեան համբաւը, ինչպէս աւանդութիւնն է ասում, այնքան շատ է եղել, որ Բայազէտի թէ Ալաշկերտի Բալալ փաշան, նախանձից դրդված, կամեցել է գալ եւ աւերել այդ տեղը ու ժողովրդին իր հարստութեամբ միասին գերել։ Փաշան գալիս է այդտեղ եւ իջեւանում ամենահարուստ հայի մօտ, եւ զարմանում է, երբ տեսնում է, որ տան բոլոր կարասիները եւ ձիաների զարդերն ու նոյն իսկ մտրակները արծաթից են շինված, ու այնքան ճոխ եւ հիւրասէր ընտանիք է այդ տունը, որ խղճահարվում է նրան որ եւ է վնաս հասցնել. եւ գանելով որ ընակիչները արժանի են այդ առասպելական հարստութեանը՝ թողնում հեռանում է, խոստանալով միշտ բարեկամ լինել այդ ընտանիքի եւ ժողովրդի հետ։ Ենթադրվում է, որ այդ հարուստ հայի անունը պէտք է Գասպար լինէր, որովհետեւ մինչեւ այժմ էլ այդտեղի աւերակ ջրաղացների անունը ջրերն ասում են «աշէ Գասպար», այսինքն Գասպարի ջրաղաց։ Նոյն տեղում գանվում են տաքերը զեկավարող երկրաչափից, որի ազնուանունը դժբաղդաբար մոռացել եմ, բայց պարտքս այնքան էլ հաճութեամբ չը վերաբերվեց իմ մտադրութեանը, առարկելով որ դեռ եւս ոչինչ յայտնի չէ եւ չարժէ ահագին աղմուկ բարձրացնել ու ուրիշներին էլ ձգել զուր ծախսերի մէջ, ինչպէս մեզ հետ է պատահել։ Բայց չը գիտեմ ինչու՞ ինձ անկեղծ չը թւացին նրա խօսքերը եւ ես այդ վերագրեցի ոչ թէ նրա անկեղծութեանը, այլ լոկ նրան, որ չէին ուզում դեռ եւս լուրը տարածվի, գուցէ մասամբ նրա համար, որ գիւղացիներից հողերի պայման կապելու մէջ դժուարութիւնների չը պատահեն եւ կամ ուրիշների ուշադրութիւնը շատ չը գրաւվի այդ ձեռնարկութեամբ, եւ այլն եւ այլն...

Մի քանի տեղերում արդէն փորձեր արել էին եւ փոսերը կրկին լցրել եւ փորձելու էին ուրիշ տեղեր էլ։ Սկսած այդ Ղազուղ-ղայա կոչված տեղից մինչեւ Զարապ-Խանա գրդի գիւղը, մօտ 20 վերստ տարածութեան վրա, նշաններ էին դրել եւ փոխ առ փոխ փորձեր են անելու ջրի ուղղութեամբ ամբողջ տարածութեան վրա. շահագործելու համար արդէն գիւղացիների հետ զանազան պայմաններ են կապել վերոյիշեալ պարոնները։

Պէտք է ասած, որ ժողովրդի մէջ աւանդութիւն կայ, որ այդ տեղերում պատմական ժամանակներում եղել են ոսկու հանքեր եւ նոյն իսկ մշակվել ու շահագործվել են. հետքերը մինչեւ այժմս էլ զանազան տեղերում նկատվում են. թէ այդ ջուրը եւ թէ տեղերը ստացել են Զարապ-խանա (հանքատեղ) անունը։ Նոյն անունը կրող քրդի գիւղի դէմը, ջրի հանդիպակաց կողմում, լերան լանջի վրա, գանվում են մի մեծ գիւղի կամ քաղաքի աւերակներ, եկեղեցիների եւ այլ շինութիւնների մնացորդներով. ենթադրվում է, որ դա «Սեօգիւղին» է, եւ այդտեղի հարստութեան համբաւը, ինչպէս աւանդութիւնն է ասում, այնքան շատ է եղել, որ Բայազէտի թէ Ալաշկերտի Բալալ փաշան, նախանձից դրդված, կամեցել է գալ եւ աւերել այդ տեղը ու ժողովրդին իր հարստութեամբ միասին գերել։ Փաշան գալիս է այդտեղ եւ իջեւանում ամենահարուստ հայի մօտ, եւ զարմանում է, երբ տեսնում է, որ տան բոլոր կարասիները եւ ձիաների զարդերն ու նոյն իսկ մտրակները արծաթից են շինված, ու այնքան ճոխ եւ հիւրասէր ընտանիք է այդ տունը, որ խղճահարվում է նրան որ եւ է վնաս հասցնել. եւ գանելով որ ընակիչները արժանի են այդ առասպելական հարստութեանը՝ թողնում հեռանում է, խոստանալով միշտ բարեկամ լինել այդ ընտանիքի եւ ժողովրդի հետ։ Ենթադրվում է, որ այդ հարուստ հայի անունը պէտք է Գասպար լինէր, որովհետեւ մինչեւ այժմ էլ այդտեղի աւերակ ջրաղացների անունը ջրերն ասում են «աշէ Գասպար», այսինքն Գասպարի ջրաղաց։ Նոյն տեղում գանվում են

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔ

Ինչպէս նախկին կոտորածների ժամանակ, նոյնպէս եւ այժմ, մակեդոնական կոտորածների ժամանակ, ռուսաց մամուլի մի քանի օրգաններ յանկարծ սոգորվել են Թիւրքասիրութեամբ եւ աշխատում են զանազան սոփեստութիւններով, շատ անգամ մարդասիրութեան տակ քողարկված մաքերով այն կարծիքը տարածել, թէ աւելորդ է եւրոպական միջամտութիւնը՝ գազանութիւնները կանգնեցնելու համար։ Այդ օրգաններից ոմանք աշխատում են նոյն իսկ մեղմացնել Թիւրքական գազանութիւնները, ասելով որ լրագրական տեղեկութիւնները չափազանցված են։ Խօսելով «Свѣтъ» լրագրի Թիւրքասիրութեան մասին, որ թոյլ է տուել իրան կասկածել «С.-П. Вѣдомости» լրագրի հաղորդած տեղեկութիւնների ճշդութիւնը, վերջինս ասում է. «Ինչով Թիւրքիան հրապուրել է «Свѣтъ»-ի խմբագիր Կ«ամարովին. գուցէ նա փափագ ունի զարդարել իր համալսարանը Մէջիդիէյի շքանշանով»։ «Свѣтъ» լրագրի օրինակին հետեւում է եւ Բագուի «Каспій» լրագիրը, որ ծաղրում է «С.-П. Вѣдомости» եւ ռուսաց միւս լրագիրների կոչը ռուսաց հասարակութեան՝ հանել Թշուառ մակեդոնացիներին օգնութեան։ Լրագիրը մեծ երկիւղ է կրում, որ չը լինի ռուսները, գնալով մակեդոնացիներին օգնութեան, կոթծանեն Թիւրքիան եւ կոտորեն Թիւրքերին։

չնորհակալութիւն յայտնելու չինած անների մասին եւ խնդրելու, որ կոմիտէտը օգնէ գիւղին՝ եկեղեցի շինելու։ Նախաճաշից յետոյ մենք այցելեցինք մի քանի աներ եւս եւ գնացինք տեսնելու հին եկեղեցին։ Նա փոքրիկ, հնաշէն մի տաճար է, որի պատերի վրա կան վրաց խուցուրի արձանագրութիւններ։ Եկեղեցու մէջ կանանց բաժնում շինված է երկյարկ վերնատուն։ Սեղանի պատկերը բերված է Էրզրումից այժմեան բնակիչների գաղթելու ժամանակ։ Եկեղեցին այնպիսի դրութեան մէջ է, որ այնտեղ վտանգաւոր է մնալը եւ աղօթելը։ Եկեղեցին այլ եւս չէ կարող ծառայել իր նպատակին։

Եկեղեցու բակում տեսանք հին գերեզմանաքարեր, որոնցից մէկի վրա նկարված էին բանալի եւ թի, միւսի վրա՝ աղեղ եւ նետ։ Կային խուցուրի տառերով փորուածքներ։

Ցանձաժողովի անդամ Գ. Սօրօկին հանեց մի քանի լուսանկարներ։

Իմաիլայից ուղեւորվեցինք Մերենիա, որ իր հողերով սահմանակից է առաջինին եւ շատ մօտ է։

IV

Մերենիա այն գիւղն է, որ ամենից շատ էր վնասված երկրաշարժից եւ որտեղ չինված է նոր տեսակ անների ամենամեծ թիւը։ Այդտեղ չինված է կոմիտէտի հաշուով 67 տուն։

Ես տեսել էի Մերենիա գիւղը երկրաշարժի արհաւիրքի անմիջական ազդեցութիւնից յետոյ։ Այդտեղ կազմվել էր աւերակների եւ փլատակների մի անորոշ կոյտ, որ սարսուռ էր բերում մարդու վրա։ Տներ չը կային. գիւղացիները փախել էին եւ պատսպարվել հարեւան գիւղերում։ Միայն մի քանի անձինք մնացել էին իրանց անների աւերակների մօտ, իբրեւ պահապաններ, որպէս զի փլատակների տակ գտնված մթերքները կողոպուտի չենթարկվեն, մարգներում թողած դարմանը եւ խոտի դէզերը ուրիշների ձեռքը չընկնեն։ Երկիւղալի էր անցնել գիւղով։ Եղած նեղ ու փոքր փողոցները խախտված էին, իսկ անների բեկորները ամեն մի շարժումից փչում էին։

Այժմ մեր առաջ ձգված էր մի ուրիշ Մերենիա։ Նորաշէն անները տալիս էին գիւղին ժպտացող եւ բարեվայելուչ կերպարանք։

Գիւղացիները իրանք էլ սկսել են իրանց նորոգած տներում չինել պատերը նոր եղանակով, եւ այդպիսի դէպքեր կարելի եղաւ արձանագրել ութ գիւղական անների վերաբերութեամբ։

Մերենիայում մենք լսեցինք նոյն կարծիքները վառարանի եւ թոնրի մասին, ինչ որ լսել էինք Իմաիլայում եւ Բեժանօյում։ Այստեղ էլ մի քանի գիւղացիներ իրանց նոր անների յատակներում զետեղել էին կաւեայ թոնիրներ, որոնց մէջ թխում էին հաց։ Երեք տան մէջ պատերը գեղեցիկ սուաղված էին. միւսների այցելութեան ժամանակ մենք լսեցինք, որ հետեւեալ ամառ գիւղացիները կը սուաղեն եւ միւս տները։

Նոր անների շարքում կան եւ նորոգված հին տներ, որոնք աւելի լաւ են չինված, քան առաջ։ Գիւղացիները այժմ աշխատում են, որ հողածածկ կտուրները հատ եւ ծանր չը լինեն։ Մի քանիսը չինել են փայտեայ կտուրներ խառն սիստեմով—հինը եւ նորը խառնած միասին։ Տեղական քահանան չինել է իր տան կտուրը բոլորովին այնպէս, ինչպէս կոմիտէտի չինած տներումը ընդունված է։ Նա ծածկել է իր կտուրը քերթով։

Մերենիայի գիւղացիները յայտնեցին յանձնաժողովի անդամներին իրանց չնորհակալութիւնը նոր տների համար եւ խնդրեցին օգնել վերանորոգելու իրանց եկեղեցին, որ բոլորովին խախտվել է երկրաշարժից։

Մենք յայտնեցինք, որ այդ մասին կը զեկուցանենք գլխաւոր կոմիտէտին։

Մերերիա գիւղը գաւառի աղքատ գիւղերից մէկն է։ Գիւղացիները, անկարող լինելով սեփական հողերով ապահովել իրանց, վաղուց կապալով են վերցրել պետական մի հողի կտոր, որ գանվում է Տարաքիսուր լճի ափին, Խումբիս կոչված տեղում, եւ այնտեղ թէ արածացնում են տարաբ իրանց անային կենդանիներին, թէ վարուցանքս են անում եւ թէ խոտ են հնձում ձմեռվայ համար։ Գիւղացիները լսել էին, որ այդ հողը պէտք է իրանցից վերցնվի։ Այդ լուրը շատ անհանգստացրել էր նրանց եւ նրանք շատ ախուր էին այդ բանից։

—Մեր անները գեղեցիկ են եւ աչքի ընկնող, ասում էին գիւղացիները, բայց մէջը ոչինչ չը կայ, մէջը աղքատութիւն է եւ մշտական կարիք։ Եթէ Խումբիսն էլ մեր ձեռքից գնայ, այն ժամանակ այլ եւս չը գիտենք, թէ ինչ պէտք է անենք։

—Իսկ վաղուց է, որ Խումբիսը ձեր ձեռքին է։

—Քանի տարուց աւելի է, բացատրեցին գիւղացիները։ Առաջ Խումբիսում կար մի փոքրիկ ընակութիւն՝ բաղկացած յոյներից, որոնք 1881 թւին գաղթեցին դէպի Կարսի նահանգը։ Հողը ընկաւ մեր ձեռքը, բացի մի կտորից, որ մնաց մի Թուրքի ձեռքում, եւ մի ուրիշ կտորից, որ տրվեց Թուշերի։ Մեր գիւղացիների մի մասը, մօտ քսան տուն, այնտեղ վարուցանքս էին անում, եւ գիւղական ամբողջ նախիրը այնտեղ տարածում էր։ Այժմ, եթէ հողը մեզնից վերցնեն, մենք որ ջուրն ընկնենք։

Թէ Մերենիա եւ թէ հարեւան գիւղերի ազգաբնակութիւնը սովորութիւն չունի պանդխտութեան գնալ եւ աշխատում է զբաղմունք գտնել գիւղերի շրջանում, ուստի ամեն մի հանգամանք, որ նուազեցնում է գիւղատնտեսութեան արդիւնքները, շատ ծանր է ազդում գիւղացիների վրա։

Մենք այցելեցինք անների մեծագոյն մասը, կատարեցինք անհրաժեշտ հարց ու փորձեր եւ մեկնեցինք գիւղից դէպի Բարալէթ գիշերելու։

Ցիշեմ այստեղ եւ մի նորութեան մասին, որին ականատես եղանք Մերենիայում։ Այդտեղ գիւղացիներից մէկի, այն է Օհան Ղուկասեանի մօտ տեսանք մի ընտրող—գատող մեքենայ, որով հացահատիկները մաքրվում էին եւ նրա զանազան տեսակները միմեանցից զատվում։ Մեքենան ձեռնատու է եւ մի երկու տարում իր գինը հանում է, որովհետեւ նա գործում է ոչ միայն իր տիրոջ, այլ եւ բոլոր ցանկացողների համար, որոնք տալիս են մեքենայատիրոջ քսան կօպիկ մէկը։ Եւ որովհետեւ ցանկացողների թիւը մեծ է, ուստի մեքենան անդադար գործի մէջ է։ Մեքենան «Mayer»-ի գործարանից է եւ կրում է № 3 համարը։ Նա գնված է Ախալքալաքում 180 բուբլիով, որ յամենայն դէպս էժան չէ։ Ես հարկաւոր համարեցի յիշել այդ մեքենայի մասին, որովհետեւ այս տեղերում նրա գործադրութիւնը նոր է մուտք գործում։

(Եր չարունակվի)

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Մոսկվայի հայ գաղութը կազմված է բացառապէս ունեւոր մարդկանցից. երկու հարիւր լիսուն բնակիչներից հազիւ հարիւրը լինեն միայն սանեակ հազարներ ունեցող հարուստներ։ Միւս մեծագոյն մասը կազմում են հարիւր եւ հազարաւոր, միլիոնատէր վաճառականները։

Այդպիսի արտակարգ հարստութեամբ հանդերձ՝ այստեղի հայերը կարող են կենդանի ապացոյց լինել այն անպատուաբեր հանգամանքի, որ հայը մեծ մասամբ զուրկ է ընդհանուր, հասարակութեան շահին ծառայող ոգուց. նա ամեն կերպ աշխատում է խոյս տալ ընդհանրութեան օգտակար լինելուց, աշխատում է իր ձիրքը, ջանքերը կողիացնել լոկ յանուն իր շահին, իր եսին։

Մեր խօսքը ճշդելու համար բաւականանանք միայն մի օրինակով.—անցեալ տարի տեղիս առաջաւոր դասակարգի մէջ մի վերին աստիճանի համակրելի միաք յղացաւ՝ հիմնել Մոսկվայի հայոց եկեղեցում մի ծխական դպրոց, որտեղ հայ երեխաները կարողանային ստանալ ի միջի այլոց սկզբնական կրթութիւն մայրենի լեզուով։ Եւ ահա գործի գլուխն անցան հեղինակաւոր եւ արժանահաւատ մարդիկ, որոնք սկսեցին դրամական միջոցներ ժողովել։

Ի՞նչ էք կարծում, ընթերցող, ինչ ընդունելութիւն գտաւ այդ գեղեցիկ ձեռնարկը Մոսկվայի պալատանման ապարանքներում ապրող, սեփական կառքերով օլացող, կլուբներում հարստներ, սանեակ հազարներ վաստող հայ բնակչի մօտ... չատ հասարակ եւ տխրաբեր եղաւ դրա հետեւանքը... Անչափ հարստութեան տէր գաղութը, որը վստահութեամբ կարող էր այդպիսի գործին նուիրել հարիւր հազարներ, դժուարութեամբ բարեհաճեց տալ մի ինչին գումար—հինգ հազարի չափ... Մոսկվայի նման տեղում դրանով գործ կատարել անհնարին է։

Ի հարկէ, բնականապէս ծխական դպրոցի հարցը դեռ մինչեւ այսօր անվրդով նիրհում է, իսկ հաւաքված գումարը ո՞վ գիտէ հիմա ումն է ծառայում...

Լեւանող՝ Հ. Համբարձումեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 20-ին

Դարձեալ մեր գաւառի հայ գիւղերի եկեղեցական գումարների մասին է մեր խօսքը. սակայն ընթերցողի հոգեկան հանգստութիւնը չը վրդովելու համար չատանում եմ հաղորդել, որ այս անգամ առիթը մի ուրախալի հանգամանք է, այն ընդհանուր եւ իրական հաշիւ-քննութիւնը, որ տեղի ունեցաւ վերջերս։

Ախալցխայի նոր նշանակած փոխանորդ Բարգէն վարդապետ Աղաւելեանը չէ ուզում իր նախորդների նման մեր գաւառից ստացած եկեղեցական հաշիւմատեանները՝ առանց ստուգելու՝ լոկ ձեւականութեան համար կոնսիստորիա ուղարկել. այլ առաջին անգամ այցելելով Ախալքալաքի գաւառի իր հօտին՝ այդ հաշիւմատեանները վերցնում է հետը, որ գիւղերում, ծխական ժողովներում, տեղնուտեղը հրապարակով քննէ հաշիւները, մանաւանդ որ դրանից առաջ կոնսիստորիայից կարգադրութիւն է եղել մեր գաւառի եկեղեցական հաշիւները կարգի բերելու։

Բարգէն վարդապետը հետեւ ունենալով տեղական գործակալ վարդապետին՝ այցելել է գաւառի բոլոր 57 հայ-լուսաւորչական գիւղերը եւ ամեն տեղ եկեղեցիների մէջ ծխական ժողովներ է կազմել՝ եկեղեցական հաշիւները ուսուցելու եւ եկեղեցիների կամ առհասարակ ծխերի կարիքները քննելու։ Ահա այդ ժողովներում ապագայի համար չատ խրատական բաներ են բացվել։ Գիւղացիները առաջին անգամն են իմանում, որ իրանց սուրբ իրաւունքն է իրանց եկեղեցու հաշիւները հրապարակով քննելու. այդ թիւրիմացութիւնը պարզվելուց յետոյ՝ չատերի փակ լեզուները բացվում են. հաշիւները կարդալու ժամանակ գիւղացիներից չատերը հաղար ու մի նկատողութիւններ են անում։ Դուրս է գալիս, որ մի տեղ «չայիրի» փողը չէ մացրած մատեանի մէջ, մի ուրիշ տեղ ստացած գումարի փոխարէն դարձեալ մուրհակն է ներկայացվում, եւ նախկին պարտապան գիւղացին ստիպված է ապացուցանել, որ փողը վճարել է, բայց մուրհակը յետ չէ ստացել։ Եւ նեղն ընկած «աթոռակալները» (երէցփոխները) խոստովանել են այդ ամենը եւ խոստացել են վճարել։

Վաչիան գիւղի երէցփոխը ցոյց է տուել, թէ իբրեւ եկեղեցապատկան 120 ռուբլին «սեպաքը» (հեղեղը) քշել, տարել է. բայց ծխական ժողովում պարզվում է, որ տուա է եւ երէցփոխը հանդիսաւոր կերպով խոստանում է վճարել։

Դաստէշ գիւղի եկեղեցու մատեանում ցոյց տուած 210 ր. ամբողջովին աներեւոյթացել է եւ այդ եկեղեցին հիմա կօպէկ չունի։

Օրմա գիւղի եկեղեցական գումարներից անհետացել են 3577 ռուբլի 33 կոպ։

Սուլդայի, Զանդուրայի, Գանձայի, Զազի, Աղավրէթի, Բուռնաշէթի, Ղօզլարի, Ականայի, Մերենիայի, Բզավէթի, Իխաիլայի եկեղեցական դրամներից էլ պակասում են որոշ գումարներ —թէ կանխիկ դրամով եւ թէ եկեղեցական արտերից ստանալիք։ Այդպիսով ամբողջ գաւառում մատեաններում ցոյց տուած եկեղեցական գումարներից պակասում էր 8644 ր. 25 կոպ., որից 1028 ռուբ. եկեղեցական արտերից պէտք է ստացվէին, իսկ 7616 ր. 25 կոպ. կանխիկ դրամներից էին կորած։ Այս գումարից 412 ռուբլու մուրհակների ժամանակը անցել է. 943 ր. 56 կոպէկի իւրացնողները որոշվել են եւ նրանցից օրինաւոր մուրհակներ են առնվել. մնացածից 1540 ռուբլի քաղաքացու վրա է, իսկ 4720 ռուբլի 70 կոպ. այժմ անյայտ են, եւ այդ գումարի համար քննութիւնները պէտք է շարունակվեն։ Նոյնպէս քննութիւն պէտք է սկսվի այն եկեղեցապատկան հացահատիկի մասին, որ թագցրել է Գիւմուրդա գիւղի երէցփոխը։

Ուրեմն եթէ անյայտ մնացած 4720 ռուբլի 70 կոպ. գումարի վրա աւելացնենք եւ ժամանակը անցած մուրհակների գումարները, կը տեսնենք, որ մատեաններում նշանակած գումարներից պակասում է 5132 ռուբլի 70 կոպէկ։ Բայց թէ տասնեակ տարիների ընթացքում որքան գումարներ են կորել ներկայ մատեաններից դուրս, նրանց գրելուց առաջ, դա անկարելի է որոշել։ Էլ չենք խօսում օրինաւոր տակոսների մասին։

Ինչ վերաբերում է մինչեւ հիմա անկորուստ մնացած եկեղեցական գումարներին, հաշւեքննութիւններից երեւում է, որ մուրհակներով 32,638 ր. 75 կ. կայ, առ ձեռն գումար երէցփոխների ձեռքին կայ 398 ր. 4 կ., իսկ գաւառական գանձատան կից խնայողական կասայում 8673 ռուբլի 60 կոպէկ, ընդամենը 41,710 ռուբլի 39 կոպէկ։

Եկեղեցական փողը գանձատուն տալը մի ուրախալի նորութիւն է մեզանում, որի պատիւը պատկանում է Բարգէն եւ Ընձակ երիտասարդ վարդապետներին։ Ցանկալի է, որ բոլոր գումարները ստացվեն եկեղեցիների պարտապաններից եւ մացնվեն գանձատուն։ Քանի որ մեր ներկայ երէցփոխները ոչ առաջվայ կրօնական երկիւղածութիւնն ու ջերմեռանդութիւնն ունեն դէպի եկեղեցու շահերը, ոչ էլ ժողովրդի վստահութեանը արժանացածներին վայել բարեխղճութիւն, պարտաճանաչութիւն եւ հասարակական ընդդ,—պէտք է գէթ այդ միջոցով սանձահարել նրանց գրգռված ախորժակները, որ ջերմեռանդ գիւղացու գրպանից դուրս եկած կօպէկները չը մտնեն աշխարհակերների որկորները։

Սալիմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, նոյեմբերի 28-ին, Պլեշնայի տաման քահանիդամեայ յօբելեանի առիթով, Թիֆլիսի ռուսաց զինուորական եկեղեցիներում տեղի ունեցան գոհացողական մաղթանքներ եւ տպա զօրահանդէսներ, որին մասնակցեցին Թիֆլիսում գտնվող զօրքերի բոլոր մասերը։ Զօրանոցներում տեղի ունեցան ընթերցանութիւններ՝ նուիրված ռուս-թիւրքական վերջին պատերազմի նկարագրութեանը։ Տօնի նախընթաց օրը, նոյեմբերի 27-ին, ռուսաց Ալէքսանդրօ-Նեւսկի տաճարում, տեղի ունեցաւ հոգեհանգիստ Ալէքսանդր II եւ Ալէքսանդր III կայսրների եւ ռուս-թիւրքական պատերազմի մէջ սպանված զինուորների յիշատակին։

—

Զորեքշաբթի, նոյեմբերի 28-ին, հրդեհ ծագեց Ներսիսեան հոգեւոր դպրոցին պատկանած շինութեան մէջ, որ գտնվում է Վանքի եւ Ռուսական կոչված փողոցների անկիւնում։ Հրդեհն սկսվեց հացթուխի խանութից։ Բարեբաղդաբար ժամանակին վրա հասած հրդեհաշէջ խումբը կարողացաւ շուտ հանգցնել կրակը եւ թոյլ չը տալ նրան մեծ չափեր առնելու։ Հրդեհից առաջացած վնասի քանակութիւնը դեռ եւս չէ որոշված։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Բաքուում հրատարակվող «Каспій» լրագրի խմբագիր-հրատարակիչ Ալի-Մարդան-բէկ Թոփչիբաշեվին կովկասեան Կառավարչապետը թոյլ է տուել հրատարակել այդ լրագիրը նաեւ տօներին հետեւող եւ երկուշաբթի օրերին։

—

Կիրակի, նոյեմբերի 1-ին, Վէտցէլի հիւրանոցում, տեղի կունենայ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների մի խմբի նախապատրաստական խորհրդակցութիւնը Թիֆլիսի քաղաքագլխի թեկնածուի ընտրութեան մասին։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ նորից հարց է բարձրացրած տեղափոխելու Թիֆլիսի այգեգործական ուսումնարանը դէպի շրջակայ գիւղերից մէկը։ Տեղափոխութեան պատճառներն են—քաղաքային կեանքի թանգութիւնը եւ բաւականաչափ հող չունենալը ոչ անկարանի եւ ոչ աշակերտների գործնական աշխատանքների համար։

—

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան անդամ իշխան Մաչաբէլի ներկայացրել է այդ ընկերութեան խորհրդին մի մտերմական զեկուցումն այն մասին, թէ ցանկալի է, որ գոնէ Թիֆլիսի նահանգում մացնվեն զեմստվոյի հիմնարկութիւններին վերաբերեալ օրէնքները։ Այս զեկուցումը, որ կազմված է գիւղատնտեսական ընկերութեան յանձնարարութեամբ, կը քննվի առաջիկայ ընդհանուր ժողովներից մէկում։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱ գիւղից մեզ գրում են. «Վերջապէս ստացանք կոնսիստորիայից մեր քանդված եկեղեցու մակարդակը եւ թոյլատրութիւն վերանորոգելու։ Եկեղեցու համար ընտրված անձինք խորհուրդներ են անում, որ գարնան բացվելուն պէս անմիջապէս սկսեն եկեղեցու շինութիւնը»։

—

ՕՇԱԿԱՆ գիւղից մեզ գրում են. «Ներքուստ մեր գիւղում տեղի ունեցաւ հետաքրքիր դէպք։ Մի տան մէջ նշանադրութիւն կար։ Հրաւիրված էին Դաւիթ եւ Եղիշէ քահանաները։ առաջինը որպէս ծխատէր, իսկ երկրորդը՝ որպէս բարեկամ։ Երբ կարգը հասնում է նշանօրհնութեան, ծխատէր Դաւիթ քահանան վերցնում է Մաշտոցը, շուրջառը, որ նշանը օրհնէ, բայց նրա վրա յարձակվում է Եղիշէ քահանան, խլելով Դաւիթ քահանայի ձեռքից ծիսակատարութեան անօթեղէները, արգելում է նշան օրհնէքը, ասելով թէ՝ «Ես պէտք է օրհնեմ, իմ ծուխն ա, քեզ ինչ, դու ընչացու ես»։ Այսպէս սկսվում է վիճաբանութիւնը եւ երկար ու բարակ հայհոյանքները Քրիստոսի աշակերտների մէջ։ Աւելի ծիծաղելին այն էր, որ Դաւիթ քահանան, տեսնելով որ ինքը ուժով չէ կարող յաղթել հակառակորդին, վերցնում է նշանի մատանին եւ սկսում է տանից փախչել։ Գործը վերջանում է, երբ հրաւիրվածները տեղեկանում են, որ տան ծխատէր քահանան տէր-Դաւիթն է, որը եւ վերջապէս օրհնում է նշանը»։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 28-ին տեղի է ունենալու տեղիս հայ հասարակութեան սովորական հայկական երեկոյթը։ Խումբն էլ պատրաստ է։ Ինչպէս յայտնի է, դեկտեմբերի 19-ին լրանում է Գր. Արծրունու մահվան տասնամեակը. որքան մեզ յայտնի է, այստեղի եկեղեցում իր ժամանակին այդ առիթով հոգեհանգիստ է կատարվելու։ Խորհուրդ կը տայինք երեկոյթը նուիրել հանգուցեալ հրապարակախօսի յիշատակին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Temps» լրագրի Կ. Պօլսից ստացած այն հեռագրի առիթով, որ սուլթանը, իր ծննդեան տարեդարձի օրը, յայտնեց իրան ներկայացող քրիստոնեայ եկեղեցիների պետերին, թէ «ինքն հաւատարապէս հոգ է տանում իր բոլոր հպատակների բարօրութեան մասին՝ առանց դաւանութեան եւ ազգութեան խտրութեան—«Arménie» լրագիրը հարցնում է. «Որքան մահմեդականներին է պատժել այդ «արդարադատ սուլթանը» 300,000 հայերին կոտորելու եւ այժմ քրիստոնեաների կոտորած տարբերու համար Մակեդոնիայում»։

—L'Orient et l'Agence Ottomane» լրագրի այն յայտարարութեան առիթով, որ իբր թէ ռուսական հիւպատոսութեան հիմնելը Միւրովիցում աւելորդ է եւ բոլորովին աննպատակայարմար է այն պատճառով, որ այդ հիւպատոսութեան ցոյց տուած հովանաւորութիւնը մի բուռն հաւատակից եւ ազգակից քրիստոնեաներին կարող է թշնամութիւն առաջացնել դէպի դրանց ուրիշ դաւանութեան քրիստոնեաների կողմից՝ «Arménie» լրագիրը նկատում է. «Ֆրանսերէն լեզուով հրատարակվող լրագրի յայտարարութիւնը թիւրքաց յայտագրում բերած պատճառաբանութիւնների ճիշդ կրկնութիւնն է եւ այդ բանը բացատրվում է նրանով, որ վերոյիշեալ լրագրի խմբագիր Նիկոլիդէս,—ինչպէս բոլորին յայտնի է,—ամսական 2000 ֆրանկ նպաստ է ստանում Թիւրքաց կառավարութիւնից։ Իսկ թիւրքական պատճառաբանութիւնների անմտութիւնը ակներեւ է. չէ՞ որ, համակերպվելով դրանց, ոչ մի քրիստոնեայ պետութիւն չը պէտք է ունենար իր հիւպատոսները եւ փոխ-հիւպատոսները Թիւրքիայում»։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են այն 'եպիսկոպոսների ցանկը, որոնք զրկված են ռոմիկից կառավարութեան դէմ յայտնած կոլլեկտիվ բողոքի պատճառով. դրանք են Ամիէնի, Բրզանսոնի, Նիցցայի, Օրլէանի եւ Սէէզի եպիսկոպոսները։ Ըստ երեւոյթին, սոյնպիսի պատիժ սպասում է եւ միւս եպիսկոպոսներին, որոնք մասնակցել են յիշված հանրագրին։

—«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է մի աղմկայոյզ լուր, թէ իբր աւստրիական կառավարութիւնը տեղեկութիւն կը տայ Իտալիային, որ ինքը հրաժարվում է վերանորոգել առեւտրական դաշնագիրը նրա հետ։ Նոյնպիսի տեղեկութիւններ կը տրվեն նաեւ ուրիշ պետութիւններին, ի միջի այլոց, եւ Գերմանիային։ Ըստ երեւոյթին, այս հարցի առիթով համաձայնութիւն է կայացել Աւստրիայի եւ Ունգարիայի մէջ։

—Կ. Պօլսից հաղորդում են «Information» լրագրին, որ Թիւրքաց մեծ վեզիր Սայիդ փաշան, որի վրա անցեալ տարի այնքան մեծ յոյսեր էին դրված, այժմ բոլորովին կորցրել է իր ժողովրդականութիւնը։ Նա ոչ միայն չիրագործեց ոչ մի կարեւոր ռէֆորմ, այլ նրա օրով չատ բան վատթարացաւ երկրի ներքին կառավարութեան մէջ։ Նա բոլորովին անգործունեայ մնաց եւ զբաղված է միայն իր ընտանեկան գործերով։ Չը նայելով իր մեծ ատիճանին, մեծ վեզիրը տասը տարի առաջ ամուսնացաւ մի չահէլ չերքեզուհու հետ, որից այժմ 7 զաւակ ունի։ Բացի այդ զաւակներից, նա իր առաջվայ ամուսնութիւնից հատած աղերք եւ աղջիկներ ունի, եւ այժմ մեծ վեզիրի գլխաւոր հոգսը իւրայիններին լաւ տեղաւորելն է. նա այն կերպով օգուտ է քաղում իր իշխանութիւնից եւ ամենալաւ պաշտօնները տալիս է իր ազգականներին առաջ ոռմիկներով։ Նա ինքը շատ հարուստ մարդ է, բայց այդ չէ արգելում նրան ամեն անգամ լաց լինել սուլթանի առաջ իր աղքատութեան մասին, եւ մեծ վեզիր դառնալուց ի վեր՝ նա արդէն երեք անգամ 6000-ական լիրա է ստացել սուլթանից իբրեւ նուէր։ Եւ սա այն մարդն է, որի վրա երիտասարդ Թիւրքերի կուսակցութիւնը մեծ յոյսեր էր դրել...

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 Նոյեմբերի

ՏՎԵՐ։ Վախճանվեց եպիսկոպոս Վասիլիյ։

ԿԱՐԱԿԱՍ։ Բէյլերի գործակալութեան հեռագիրը պնդում է, թէ վէնեցուէլական չորս զինուորական նաւեր բռնված են Լագուարա նաւահանգստում անգլօ-գերմանական նաւատորմից։ Անգլիահպատակները Կարակասում ձերբակալված են։

ԿՈՒՐՍԿ։ Նահանգական զէմստվոյի ժողովը որոշել է միջնորդել յեռաձգելու անասնաբուժական նոր կանոնների գործադրութիւնը։

ՍՕՖԻԱ։ Սինոդի շնորհաւորութեանը իշխանը ցաւ յայտնեց բոլգարական նոր սերնդի բռնած ուղղութեան վերաբերմամբ։

Ասում են, որ թիւրքական ռէֆորմները Մակեդոնիայում դատարկ խօսքեր են։

Ապստամբների գործողութիւնները շարունակվում են։

28 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պլեշնայի տաման քահանիդամեայ յօբելեանի առիթով հրատարակված են Բարձրագոյն հրովարտակներ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի եւ գեներալ-ադիւտանտ կոմս Միլիւտինի անունով։

ԼՕՆԴՕՆ։ Վէնեցուէլական մի յածանաւ բռնված է անգլիացիներից Տրինեդատի մօտ։

ԲԵՐԼԻՆ, Ռէյխստագը վերջացրեց մաքսային սակագներին վերաբերեալ զեկուցումների քննութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին եւ նեարդային։

Մ. Գ. Սուեթիսեանց—10—11 ժ. մորթու, վենեբական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. Թարանճատեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Ի. Գզեղիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկաշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (երեկորեաւժ.)։

Ա. Ն. Շապկօվակի—6—7 ժ. նեարդային (երեկորեայժ), վենեբական եւ մորթու։

Գ. Ա. Թարխանեանց—7—8 ժ.

Գ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Գնաբը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Ռաբինովիչ—տանը. ծաղկոցում և բժշկական մասնաճարգ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергіевская ул., д. 12.

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու եւ վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիօ-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի եւ արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.

Երեկոյեան 4—6 ժ.

Բեսարաբսկայա փողոց № 41. տան Արարատեանի։ Бебутовская ул. № 41, Домъ Араратова. 27—150

ԼՈՒՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

„ԱՐԱՔՍ“

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑՆԵՐ

1903 թ. համար։



Պատի օրացոյցը իր մէջ պարունակում է և հայերէն եւ ռուսերէն օրացոյցներ, հայերէն եւ ռուսերէն տառերով, իսկ ծոցինը ունի լիակատար եւ շատ հեռաքրքիր յաւելուած։

Մի հատ պատի եւ մի հատ էլ ծոցի օրացոյց գնողը կը ստանայ մի օրինակ «Ծոցի երգարան» նուէր։

Պատի օրացոյցն արժէ հատով 50 կոպէկ, դուսմարով 35 կոպէկ։ Ծոցինը—հատով 20 կոպ., դուսմարով 15 կոպէկ։

Դիմել՝ Александрополь, Эрив. губ. Типографія Саноянца и Степанянца. 10—20

Լոյս տեսաւ

ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

(Հրէասպանութիւն)

մեծ վէպ Պարսկաստանի կեանքից

(323 էջ. մանր. տառերով)

ԳԻՆՆ Է ՄԻ ՌՈՒԲԼԻ

Դիմել Թիֆլիսում՝ Գուտենբերգ գրավաճառանոցին, իսկ միւս քաղաքներից—«Մուրճի» խմբագրութեան։ Տան հատ գնողները վճարում են 9 ռուբլի։ 1—10

Ա. ՄԱՄԱՋԱՆ հրաւիրում է խմբական եւ բաժշտութիւն սիրողներին մասնակցելու շուտով տրվելիք համերգին։ Ցանկացողները կարող են գալ առաջին փորձին կիրակի, դեկտեմբերի 1-ին, երեկոյեան ժամի 5-ից մինչեւ 8-ը։ Вознесенская, 17։ 1—3

ՀՐԱՒԷՐ

Դեկտեմբերի 1-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի 11½-ին, լինելու է ԲԵԹՂԵՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ եկեղեցու ծխականների ժողով՝ բարեկրօն Գէորգ քահանայ Մեհրաբեանցին բնակութեան համար եկեղեցական տուն տալու հարցը քննելու։ Ուստի խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին որոշած օրը եւ ժամին շնորհ բերել նոյն եկեղեցին նշանակած զբաղմունքներին մասնակցելու։

Գործակալ Թիֆլիսի հայոց եկեղեցիների՝

1—2 Գրիգորիս քահ. Երզնկեան

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐԸ

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Ճանապարհածախսով 1 ռ. 20 կոպէկ։

Դիմել հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ“ եւ Գուտենբերգ գրավաճառանոցը։ 2—10

Դեկտեմբերի 28-ին տրվելիք

ԴԵԿԱԴԵՆՏԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ

համար, ընդունում եմ պատուէրներ բազմատեսակ դեկադենտական ծաղիկների։ Межевая № 42, д. Сардарова. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, նոյեմբերի 30-ին, նշանակված է

ԳԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ

3—3

ՄԻ ՀԱՑ ՏԻԳԻՆ

որ ստացել է Թիֆլիսի իգական գիմնազիան եւ Ժընէվի համալսարանը, ցանկանում է դասեր ունենալ առաջիններից, ռուսերէն եւ գլխաւորապէս ֆրանսերէն լեզուներից։

Դիմել առաւօտեան ժամի 10—4-ը՝ Веламиновская ул. д. Лорисъ-Меликова, № 19. 10—10

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

հայ հմուտ բժիշկ եւ մանկաբարձուհի։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմելու տանուտէր Խաչատուր Միքայէլեանցին։ Въ Верхніе-Акулисы. Старшинѣ Микаелянцу. 2—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրախանութը ընդունում է բաժանորդագրութիւն առաջիկայ 1903 թուականի, հետեւեալ օրաթերթերի եւ ամսագիրների համար։

«ՄՇԱԿ», օրաթերթ, տարեկան 10 ռ.

«ԱՐՇԱԼՈՅՍ» շաբաթական 2 անգամ—8 ռ.

«ՄՈՒՐՃ», ամսագիր, տարեկան 10 ռ.

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ», շաբաթաթերթ—6 ռ.

«ԲԱԶՄԱՎԷՊ», ամսաթերթ—4 ռ.

«ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՑ», ամսաթերթ 4 ռ.

«ԼՈՒՄԱՑ», երկամեայ հանդէս—6 ռ.

„Журналъ для всѣхъ“ պատկերազարդ ամսաթերթ—1 ռ.

«ԲԱՆԱՍԷՐ», ամսաթերթ—6 ռ.

«ԱՋԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ», երկամեայ—3 ռ.

«Վիճակաւոր բառարան ռուսերէնից հայերէն», Դաղբաշեանի—6 ռ.

«ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆՈՒ», երեք հատոր, փափուկազմ—4 ռ.

Ստացված են ռուսերէն, հայերէն եւ վրացերէն զանազան տեսակ պատ, ծոցի եւ սեղանի օրացոյցներ։ Գուտենբերգ գնողներին զիջումն կը լինի։—Ցանկացողներին կարող ենք վերադիրով ուղարկել, եթէ պատուէրի հետ բաւական կանխավճար։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гутенбергъ“, Лорисъ-Меликовская ул.; № 11. Г. Галустяну. 3—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍՅ ԼՈՒՆԿԻՆ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու տեսակ անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յոնձնարարական, գործարանական, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշուապահութիւն։

2) Առեւտրական թուաբանութիւն։

3) Առեւտրական թղթակցութիւն։

4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։

5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենավաստ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1903 թուի Յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ Է 3 ռ. 50 կոպէկ։ (կ. ե. հ.) 1—25

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՋԵԱՆԻ

ԴՕԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։

Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19. 5—24

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԿՕՆՖԵՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած տպրանքները ալ խանացան—

Կովկասում կոնֆետի արդիւնաբերութեան

ՄԻՍԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒՆՈՒՄ, Կարամել «ԻԻԲԻԼԻԷՆԱՑԱ» եւ տասնապակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռախօս № 862, գործարանական խանութինը № 772։

84—100

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԳԷԾԳԱ“

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը	1,650,000	ռուբլի
Պահեստի դրամագլուխը	2,664,808	»

Ի. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին-Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր վճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրեով նրանց պահեստներում, որի համար չատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Ի. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւաշնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրոսպեկտի վրա, № 10-բարդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւաշնացութեան համար՝ Բաքում, գետային շոգենաւաշնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Տելեֆոն № 108

(Ե. ռ. կ.) 24—120

Дозволено Цензурою, Тифлисъ, 28 Ноября 1902 г.

Электропечатная Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская у.